



**IHSS**  
IN-HOME SUPPORTIVE SERVICES  
TELEPHONE TIMESHEET SYSTEM



# **Էլեկտրոնային Այցի Չաստատում (EVS) IHSS Չեռախոսային Ժամացուցակի Չամակարգ (TTS) IHSS/WPCS Ոչ համատեղ բնակվող մատակարարի մուտքի/ելքի գործողությունը**

Լրացուցիչ աջակցության համար խնդրում ենք զանգահարել IHSS-ի  
Ծառայության Բաժին՝ (866) 376-7066 հեռախոսահամարով, Երկուշաբթիից –  
Ուրբաթ, 8 am-ից մինչև 5 pm-ը:



EVV համակարգը կատարելագործվել / թարմացվել է Տնային Աջակցության Ծառայությունների, արդեն իսկ գոյություն ունեցող, (IHSS) Հեռախոսային Ժամացուցակի Համակարգի (TTS) և Էլեկտրոնային Ծառայությունների Պորտալի (ESP) հիման վրա՝ աշխարհագրական դիրքը Էլեկտրոնային եղանակով հաստատելու համար, երբ մատակարարները մուտք են գործում և ելք կատարում յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Դուք կարող եք մուտք գործել և ելք կատարել **յուրաքանչյուր** աշխատանքային օրվա համար՝ օգտագործելով հետևյալ համակարգերից որևէ մեկը՝ *TTS, ESP, IHSS EVV Mobile App (Բջջային հավելվածը)*:

Այս ուղեցույցը նկարագրում է, թե ինչպես մուտք գործել և ելք կատարել **TTS**-ի միջոցով:

### **Նախքան մուտքի (check -in) / ելքի (check-out) գործողությունը կատարելը՝ պետք է իմանալ հետևյալը.**

- **Յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և վերջում,** IHSS/WPCS մատակարարները, ովքեր **չեն բնակվում** նույն տնային տնտեսությունում որտեղ բնակվում է ստացող(ներ)ը, ում համար նրանք աշխատում են՝ կոչվում են ոչ համատեղ բնակվող մատակարարներ: Ոչ համատեղ բնակվող IHSS/WPCS մատակարարներից պահանջվում է մուտք գործել և ելք կատարել՝ մուտքագրելով գտնվելու վայրը (*տուն կամ համայնք*) և ծրագրի տեսակը (*IHSS կամ WPCS, ըստ անհրաժեշտության*):
- **Ձեր գտնվելու վայրը չի արձանագրվում ողջ օրվա ընթացքում:** Աշխարհագրական դիրքը/տեղանքը Էլեկտրոնային եղանակով կհաստատվի միայն այն ժամանակ, երբ մատակարարը մուտք գործելիս և ելք կատարելիս ընտրի «տուն» տարբերակը՝ որպես գտնվելու վայր:
- TTS-ից օգտվողները **պետք է** մուտք գործեն և ելք կատարեն **ստացողին պատկանող քաղաքային/ֆիքսված հեռախոսից:** Եթե ստացողը չունի ֆիքսված հեռախոս, ապա մատակարարը պետք է օգտագործի ESP կամ IHSS EVV բջջային հավելվածը: Եթե TTS-ին զանգահարելու համար օգտագործեք բջջային հեռախոս՝ մուտքի/ելքի գործողությունը կատարելու համար, ապա Էլեկտրոնային եղանակով չի հաստատվի տեղանքը/գտնվելու վայրը:
- Ոչ համատեղ բնակվող մատակարար(ներ)ը, ովքեր IHSS և WPCS ծառայություններ են տրամադրում ստացողին, որը կապված է և՛ IHSS, և՛ WPCS ծրագրերի հետ, ապա նրանք պետք է մուտք գործեն և ելք կատարեն երկու ծրագրերի համար Էլ առանձին:

- **Որևէ տուլժի/տուգանքի չեք ենթարկվի, եթե մուտք գործելու կամ ելք կատարելու ժամանակ սխալ եք թույլ տվել:**  
 Մատակարարները կարող են ուղղել իրենց գրառումները մինչև այն պահը, երբ նրանք ներկայացնեն իրենց ժամացուցակը ստացողին՝ վերանայման համար:
- Մատակարարները էլեկտրոնային եղանակով կներկայացնեն իրենց ժամացուցակները, ինչպես անում են ներկայումս՝ ESP-ի և/կամ TTS-ի միջոցով:
- Մատակարարները վարձատրվում են աշխատած ժամերի համար. ոչ թե մուտք գործելու և ելք կատարելու միջև ընկած ժամանակահատվածի համար:
- **Այս ամենը ոչ մի ազդեցություն չունի ստացողների վրա:**  
 Մուտք գործելու/ելք կատարելու պահանջը չի փոխում ստացողի ծառայությունները կամ դրանց մատուցման եղանակը:

***Եկեք սկսենք!***

TTS մուտք գործելու համար օգտագործեք ֆիքսված/քաղաքային հեռախոս և զանգահարեք՝ **(833) DIAL EVV** կամ **(833) 342-5388**:

**Մուտքագրում TTS-ին**

Չեռախոսահամարը հավաքելուց հետո TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները.

***Շնորհակալություն IHSS-ի Չեռախոսային ժամացուցակի համակարգ զանգահարելու համար: Խնդրում ենք ընտրել Ձեր նախընտրելի լեզուն հետևյալ տարբերակներից: Դուք կարող եք ցանկացած պահի կատարել Ձեր ընտրությունը.***

- Անգլերենի համար՝ սեղմեք ‘1’***
- Իսպաներենի համար՝ սեղմեք ‘2’***
- Չայերենի համար՝ սեղմեք ‘3’***
- Չինարենի համար՝ սեղմեք ‘4’***

Ընտրեք ձեր նախընտրած լեզուն՝ օգտագործելով ձեր հեռախոսի ստեղնաշարը:

Հաջորդը, TTS-ը Ձեզ կհուշի ընտրել՝ թե արդյոք Դուք ստացող եք, թե մատակարար:

- Սեղմեք ‘1’, եթե Դուք ստացող եք,***
- Սեղմեք ‘2’, եթե Դուք մատակարար եք:***

Քանի որ Դուք Մատակարար եք՝ **Սեղմեք '2'**.



Դուք կտեղափոխվեք Հիմնական Մենյու/ցանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումը.

**Սա հիմնական մենյուն է: Խնդրում ենք ընտրել հետևյալ տարբերակներից: Դուք կարող եք ցանկացած պահի կատարել Ձեր ընտրությունը.**

*Սեղմեք '1' մուտք գործելու համար*

*Սեղմեք '2' Ձեր գաղտնանիշը վերականգնելու համար*

*Սեղմեք '3' գրանցման համար*

Ձեր TTS հաշիվ մուտք գործելու համար՝ **Սեղեք '1'**:



'Մուտք գործելու' տարբերակն ընտրելուց հետո TTS-ը Ձեզ կտա հետևյալ հուշումները.

***Խնդրում ենք մուտքագրել Ձեր 9-նիշանոց մատակարարի համարը, որից հետո՝ վանդականիշը (#): Ձեր մատակարարի համարը կարելի է գտնել Ձեր կողմից ստացված մատակարարի որևէ փաստաթղթում:***

**Օգտագործելով ձեր հեռախոսի ստեղնաշարը՝ խնդրում ենք մուտքագրել Ձեր 4 նիշանոց գաղտնանիշը / ծածկագիրը, որից հետո՝ վանդականիշը (#):**

Ձեր հաշիվ մուտք գործելուց հետո՝ Դուք կտեղափոխվեք Գործողությունների ընտրացանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները.

- Սեղմեք '1', այսօրվա ժամերը մուտքագրելու համար,**
- Սեղմեք '2', նախորդ օրվա ժամերը մուտքագրելու համար,**
- Սեղմեք '3', ժամացուցակի պատմությունը վերանայելու համար,**
- Սեղմեք '4', ժամացուցակը ներկայացնել ստացողին վերանայման համար,**
- Սեղմեք '5', մերժված ժամացուցակն ուսումնասիրելու և գործողություն կատարելու համար,**
- Սեղմեք '6', մուտք գործել տվյալ ստացողի համար,**
- Սեղմեք '7', ելք կատարել տվյալ ստացողի համար:**

**Ամենօրյա մուտք կատարելու (Check-In) գործողությունը**

Ստացողի համար մուտք գործելու համար, **Սեղմեք '6':**



Դուք կտեսնեք *Ընտրել Ստացողին* տարբերակը: TTS -ը Ձեզ կտրամադրի հետևյալ հրահանգը.

**Արդյո՞ք ցանկանում եք մուտք գործել <Ձեր ստացողի անունը>-ի համար:**  
**Սեղմեք '1' Այո-ի համար, կամ**  
**Սեղմեք '2' Ոչ-ի համար:**

Ձեր ընտրած ստացողի համար մուտք գործելու համար՝ **Սեղմեք '1' Այո-ի համար:**

**Նշում.** Եթե Ձեր ընտրած ստացողը կապված է ինչպես IHSS-ի, այնպես էլ WPCS ծրագրերի հետ, և Դուք տրամադրում եք և՛ IHSS, և՛ WPCS ծառայություններ նրա համար, ապա ձեզանից կպահանջվի առանձին մուտք գործել երկու ծրագրերի համար:

Հաջորդը, Ձեզ կտրամադրվի *Տեղանքի Ընտրություն* տարբերակը: TTS-ը Ձեզ կտրամադրի հետևյալ հրահանգը.

***Խնդրում ենք ընտրել այն վայրը/տեղանքը, որտեղից մուտք եք գործում:***

***Սեղմեք '1' Տան համար, կամ***

***Սեղմեք '2' Համայնքի համար:***

TTS-ը կհարցնի Ձեզ ստուգել՝ արդյոք Ձեր մուտք գործած գրառումը ճիշտ է, թե՞ ցանկանում եք ինչ որ բան ուղղել.

***Ստուգեք հետևյալի համար.***

- ***Ստացողի անունը և ազգանունը***
- ***Ստացողի գործի համարը***
- ***Ծրագրի տեսակը՝ IHSS կամ WPCS***
- ***Գտնվելու վայրը՝ Տուն կամ Համայնք***

***Եթե ամեն բան ճիշտ է, սեղմեք '1' կամ սեղմեք '2'՝ այս գրառումն ուղղելու համար:***

Հաստատելու համար, որ մուտք եք գործել ճիշտ տվյալներով՝ **սեղմեք '1'**: Ձեր գրանցումը պահպանվել է: Դուք կվերադառնաք Գործողությունների ընտրացանկ:

**Շնորհավորում ենք!** Դուք հաջողությամբ մուտք եք գործել այս ստացողի համար, այժմ կարող եք ավարտել Ձեր TTS-ի գործողությունը:

Եթե Դուք աշխատում եք մի քանի ստացողների համար միևնույն ընտանիքում և/կամ մեկ այլ ընտանիքում, դուք պետք է կրկնեք մուտք գործելու քայլերը, երբ կատարեք օրվա առաջին IHSS ծառայությունը հաջորդ ստացողի համար:

Երբ պատրաստ լինեք ելք կատարել Ձեր աշխատանքային օրվա ավարտին, ապա պետք է կատարեք դուրսգրման գործընթացը՝ հետևելով ստորև բերված *ամենօրյա ելք կատարելու* քայլերին:

**Ամենօրյա ելք կատարելու (Check-Out) գործողությունը**

Ստացողի համար ելք կատարելու համար, Ձեզ հարկավոր է կրկին մուտք գործել TTS՝ հետևելով *Մուտքագրում TTS-ին* բաժնում նշված քայլերին: Ձեր TTS հաշիվ մուտք գործելուց հետո՝ Դուք կտեղափոխվեք Գործողությունների ընտրացանկ: TTS-ը ձեզ կտա հետևյալ հուշումները.

- Բարի գալուստ Գործողությունների ընտրացանկ:**
- Սեղմեք '1' այսօրվա ժամերը մուտքագրելու համար,**
- Սեղմեք '2' նախորդ օրվա ժամերը մուտքագրելու համար,**
- Սեղմեք '3' ժամացուցակի պատմությունը վերանայելու համար,**
- Սեղմեք '4' ժամացուցակը ներկայացնել ստացողին վերանայման համար,**
- Սեղմեք '5' մերժված ժամացուցակն ուսումնասիրելու և գործողություն կատարելու համար,**
- Սեղմեք '6' մուտք գործել տվյալ ստացողի համար,**
- Սեղմեք '7' ելք կատարել տվյալ ստացողի համար:**

Ստացողի համար ելք կատարելու համար՝ **Սեղմեք '7'**



Դուք կտեսնեք *Ընտրել Ստացողին* տարբերակը: TTS -ը Ձեզ կտրամադրի հետևյալ հրահանգը.

- Արդյո՞ք ցանկանում եք ելք կատարել <Ձեր ստացողի անունը> համար:**
- Սեղմեք '1' Այո-ի համար, կամ**
- Սեղմեք '2' Ոչ-ի համար:**

Ձեր ընտրած ստացողի համար ելք կատարելու համար՝ **Սեղմեք '1' Այո-ի համար:**

**Նշում.** Եթե Ձեր ընտրած ստացողը կապված է ինչպես IHSS-ի, այնպես էլ WPCS ծրագրերի հետ, և Դուք տրամադրում եք և՛ IHSS, և՛ WPCS

ծառայություններ նրա համար, ապա ձեզանից կպահանջվի առանձին էլք կատարել երկու ծրագրերի համար:

Հաջորդը, Ձեզ կտրամադրվի *Տեղանքի Ընտրություն* տարբերակը: TTS-ը Ձեզ կտրամադրի հետևյալ հրահանգը.

***Խնդրում ենք ընտրել այն վայրը/տեղանքը, որտեղից էլք եք կատարում:***

***Սեղմեք '1' Տան համար, կամ***

***PUեղմեք '2' Համայնքի համար:***

TTS-ը կհարցնի ձեզ ստուգել՝ արդյոք ձեր էլք կատարած գրառումը ճիշտ է, թե՞ ցանկանում եք ինչ որ բան ուղղել.

***Ստուգեք հետևյալի համար.***

- ***Ստացողի անունը և ազգանունը***
- ***Ստացողի գործի համարը***
- ***Ծրագրի տեսակը՝ IHSS կամ WPCS***
- ***Գտնվելու վայրը՝ Տուն կամ Համայնք***

***Եթե ամեն բան ճիշտ է, սեղմեք '1' կամ սեղմեք '2'՝ այս գրառումն ուղղելու համար:***

Հաստատելու համար, որ էլք եք կատարել ճիշտ տվյալներով՝ ***Սեղմեք '1'***:

TTS-ը կխնդրի Ձեզ մուտքագրել օրական աշխատած ժամերը հետևյալ հուշումով.

***Խնդրում ենք մուտքագրել Ձեր աշխատած ժամերը որպես երկնիշ թիվ: Օրինակ, եթե աշխատել եք չորս ժամ, ապա մուտքագրեք «04»: Մուտքագրեք Ձեր աշխատած ժամերը, որից հետո վանդակակնիշ (#) նշանը:***

Այնուհետև, TTS-ը կցուցադրի Ձեր մուտքագրած ժամերը և կհարցնի՝ արդյոք դրանք ճիշտ են, թե՞ ցանկանում եք ուղղել: Եթե հաստատեք, որ մուտքագրված ժամերը ճիշտ են, ապա TTS-ը Ձեզ կխնդրի մուտքագրել թույլները հետևյալ հուշումով.

***Խնդրում ենք մուտքագրել Ձեր աշխատած թույլները որպես երկնիշ թիվ: Օրինակ, եթե աշխատել եք երեսուն թույլ, ապա մուտքագրեք «30»: Մուտքագրեք ձեր աշխատած թույլները, որից հետո վանդակակնիշ (#) նշանը:***



TTS-ը կցուցադրի Ձեր մուտքագրած թույլները և կհարցնի՝ արդյոք դրանք ճիշտ են, թե՞ ցանկանում եք ուղղել գրառումը: Եթե հաստատեք, որ մուտքագրված թույլները ճիշտ են, TTS-ը կպահի Ձեր գրառումը, և Դուք կվերադառնաք Գործողությունների ընտրացանկ:

**Շնորհավորում ենք!** Դուք հաջողությամբ ելք եք կատարել այս ստացողի համար: Եթե Դուք աշխատում եք միևնույն ընտանիքում և/կամ տարբեր տնային տնտեսություններում մի քանի ստացողների համար, Դուք պետք է կրկնեք ելքի/դուրսգրման նախորդ քայլերը հաջորդ ստացողի համար, այն բանից հետո, երբ ավարտեք օրվա վերջին IHSS ծառայությունը:

### **Ժամացուցակի ճշգրտումներ**

**Ի՞նչ կպատահի, եթե ես մոռանամ մուտք գործել և/կամ ելք կատարել:**

Դուք կարող եք մուտք գործել հենց որ հիշեք: Իսկ եթե մոռացել եք ելք կատարել, ապա համակարգը Ձեր ժամացուցակում կցուցադրի 11:59 pm որպես ավարտի ժամ: Դուք կարող եք ցանկացած ժամանակ կարգավորել Ձեր մուտքի և ելքի ժամերը՝ նախքան ժամացուցակը ներկայացնելը, TTS-ի Գործողությունների ցանկից ընտրելով թիվ #2 տարբերակը (Մուտքագրեք ժամը նախորդ օրվա համար):

**Իսկ ին՞չ կլինի, եթե ես ելք եմ կատարել և նորից վերադառնամ աշխատանքի:**

Դուք կարող եք կրկին մուտք գործել և ելք կատարել: Համակարգը ֆիքսելու է մուտք գործելու ամենավաղ ժամանակը և ելք կատարելու համար՝ վերջին ժամանակը:

**Ի՞նչ անել, եթե ես իմ ժամացուցակը ստացողին հանձնելուց հետո նկատել եմ սխալ:**

Այս հարցում տարբերություն չկա, որովհետև պետք է անեք այն ինչ անում եք ներկայումս: Ձեր ստացողը կարող է մերժել Ձեր ժամացուցակը, որպեսզի Դուք ուղղումներ կատարեք ցանկացած ժամանակ՝ նախքան այն հաստատելը:

**Մատակարարների համար չկան տուլժեր/տուգանքներ, եթե նրանք սխալ են թույլ տալիս մուտք գործելիս կամ ելք կատարելիս:**

**Եթե մատակարարն այլևս չի աշխատում ստացողի համար, և ստացողի անունը հայտնվում է որպես նրանց ակտիվ ստացողներից մեկը, ապա մատակարարը պետք է դիմի իր**

**տեղական վարչաշրջանի IHSS գրասենյակ օգնության համար:**

**Ի՞նչ եթե ես օգնության կարիք ունեմ:**

Մատակարարները կարող են զանգահարել՝  
IHSS Service Desk 1-866-376-7066 հեռախոսահամարով, Երկուշաբթիից-  
Ուրբաթ, 8 ամ-ից մինչև 5 րո-ը, բացառությամբ տոների: